«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Վանաձորի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ. )

1. **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում**

2026 թվականի հաշվետու ժամանակահատվածում /հունվար- հունիս ամիսներին/ գնահատվել է՝ 208 աշակերտ՝ 132 տղա և 76 աղջիկ, նախատեսված 170 -ի փոխարեն: Թվերի տարբերությունը պայմանավորված է գնահատման հայտերով:

Դպրոցներում՝ 153 աշակերտ, 101 տղա և 52 աղջիկ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում հունվար - հունիս ամիսներին նախատեսված 34 սանի փոխարեն գնահատվել է 55 սան, որից 31-ը տղա, 24-ը՝ աղջիկ: ՄԿՈՒ-ներում հաշվետու ժամանակահատվածում գնահատումներ չենք կատարել:

2. **Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում**

Հաշվետու ժամանակահատվածում ՝ հունվար-հունիս ամիսներին, Վանաձոր ՏՄԱԿ-ին ամրագրված ուսումնական հաստատություններում սովորում և աջակցություն են ստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 818 երեխա,258 աղջիկ և 560 տղա: Դպրոցում սովորում է 692 աշակերտ՝ 217 աղջիկ և 475 տղա, մանկապարտեզներում աջակցություն են ստանում 126 սան՝ 41 աղջիկ և 85 տղա:

Հաշվետու ժամանակահատվածում ՏՄԱԿ-ի կողմից դպրոցներում, ՆՈՒՀ-երում ծառայություններ մատուցվել են ըստ հետևյալ տեսակի և քանակի. հատուկ մանկավարժական ծառայություն 738 երեխայի, հոգեբանական ծառայություն՝ 150 երեխայի, լոգոպեդական ծառայություն՝ 477, սոց. մանկավարժական ծառայություն՝ 330 երեխայի:

**Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ**

Հաշվետու ժամանակաշրջանում վերապատրաստումներ իրականացվել է

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | Ապահով և անվտանգ կրթական և զարգացման միջավայր | 50 |
| 2 | Կրթության աջակցող միջոցներ,մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 1077 |
| 3 | ԿՁԱՊԿ գնահատման ընթացակարգեր | 4 |

| | | |
|---|---|---|
| 4 | Հոգեբանի տարեկան պլանավորում | 3 |
| 5 | Սթրեսը դեռահասների կյանքում:Սթրեսի առաջացման նշաններն ու ազդեցությունը | 32 |
| 6 | Ծնողների ներգրավվածությունը երեխայի կրթական միջավայրում և դրական ազդեցությունը կրթության մեջ | 70 |
| 7 | Ընկալման փոփոխություն, ուսուցիչների իրավունքների և հնարավորությունների ընդլայնում | 46 |
| 8 | Գիտակից ծնողավարում | 254 |
| 9 | Հանդիպում դեռահասների հետ, մասնագիտական կողմնորոշում և փորձի փոխանակում | 8 |
| 10 | Կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ | 9 |
| 11 | Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ | 290 |
| 12 | Ուսուցչի օգնականի գործառույթները | 11 |
| 13 | Սահմաններ, սահմանափակումներ, թվային կախվածություն | 8 |

3. **Խորհրդատվություն**

4. Վանաձոր ՏՄԱԿ-ի խորհրդատվության բաժինը 2026 թվականի հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է խորհրդատվություն 96 ուսումնական հաստատությունում ՝ 98-ի փոխարեն: Խորհրդատվություններն իրականացվել է 298 հատ՝ 1441 անձի:

5. **Մշտադիտարկում**

Վանաձորի ՏՄԱԿ-ի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 91 մշտադիտարկում 102-ի փոխարեն" դպրոցում 69, ՆՈՒՀ-ում՝ 22:

Մշտադիտարկման արդյունքներում հիմնական արձանագրված խնդիրներից է ռեսուրս սենյակների բացակայությունը, ֆիզիկական միջավայրի անհամապատասխանությունը չափանիշներին:Մշտադիտարկման ընթացքում խնդիրներ են նկատվել նաև հոգեբանի տարեկան հաշվետվություններում: ՏՄԱԿ-ի կողմից կկազմակերպվի հոգեբանների համար վերապատրաստում- սեմինար:

Դպրոցները պարտավորվել են հնարավորությունների սահմանում շտկել թերությունները:

6. **Համագործակցություն**

Հաշվետու ժամանակահատվածում համագործակցել ենք «COAF Հայաստանի մանուկների

հիմնադրամի» հետ,իրականացվել է վերապատրաստում- քննարկում լոգոպեդների համար:Ձեռք է բերվել հետագա համագործակցության պայմանավորվածություն:Համագործակցել ենք ՏՄԱԿ-ին ամրագրված դպրոցների, մանկապարտեզների հետ: Համագործակցվող հաստատություններում իրականացվել են գնահատումներ, խորհրդատվություններ և աջակցումներ, ըստ նախապես մշակված պլանի և ըստ անհրաժեշտության համագործակցել ենք մարզպետարանի և քաղաքապետարանների կրթության,երեխաների իրավունքների պաշտպանության համապատասխան բաժինների հետ՝ կազմակերպելով քննարկումներ:Քննարկումներ են կազմակերպվել նաև հասարակական կազմակերպությունների և միասնական սոցիալական ծառայությունների հետ:

**7.Խելամիտ հարմարեցումներ**

Հաշվետու ժամանակահատվածում՝ 2026թ. հունվար-հունիս ամիսներին տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից սպասարկվող ուսումնական հաստատություններում ֆիզիկական միջավայրի հարմարեցումների ապահովում չի եղել:

Հաշվետու ժամանակահատվածում խելամիտ հարմարեցումներով ապահովվել է 19 ՆՈՒՀ -ում ՝ 94 սանի համար և 56 դպրոցում՝ 621 աշակերտի համար, սակայն ՆՈՒՀ- երում խելամիտ հարմարեցումները ապահովվել են ֆինանսական բարձրացված չափաքանակի հաշվին:

Կենտրոնի անվանումը՝ «ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

Տնօրեն՝ (ստորագրություն) Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (անուն, ազգանուն)

Կ.Տ.

« 01» «07» 2026թ.